ներում ապօրինաբար հաստատուած թուրք և քիւրդ թափառականներին հեռացնելու համար, և առհասարակ ընթացքի մէջ են կալուածքին վերաբերեալ մի շարք վիճելի հարցեր, որոնց Մինոզը ընթացք է տալիս։ Այնուամենայնիւ Մինոզը՝ կամենալով նպաստել Ղարաբաղի թեմի դպրոցական գործին, կալուածների կառավարութիւնը վերջնականապէս կանոնաւորելուց և բաւարար եկամուտ ստանալուց յետոյ հնարաւոր չափերով մասն կը հանէ թեմի դպրոցներին։ 19 մարտի, թ. 128։

Բարձրագոյն ներման արժանացած քահանաներ

Նորին Գայսերական Մեծութեան բարձրագոյն ներման են արժանացել և վերստին իրենց քահանայական և անհատական իրաւունքներն ձեռք բերել՝ Ազգիս Վեհափառ Հայրապետի միջնորդութեան համաձայն և Պետական Դումայի անդամ պ. Միքայէլ Պապաջանեանի աջակցութեամբ Շուշի քաղաքի երեք քահանաներ—Գարեգին աւագ քահանայ Տէր Յովհաննիսեան, Կարապետ քահանայ Վարդապետեանց և Արսէն քահանայ Հախումեանց։ Այդ քահանաները մեղադրւում էին հայ թուրքական ընդհարումների ժամանակ 1895—96 թ. Շուշու Ազուլեաց եկեղեցու մէջ պայթուցիկ նիւթեր գտնուելու պատճառով՝ որի համար դատուեցին և վերջին երեք տարին 1910 թ. նոյեմբերից մինչև 1913 թ. նոյեմբեր ամիսը նստած էին Շուշի քաղաքի բանտում, իրաւունքներից և քահանայական կոչումից զրկուած։